ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԸ

1921 թ. սկզբներին, Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կառավարության հրամանագրով Երևանում կազմակերպվեց Պետական թանգարան՝ գեղարվեստական բաժնով։ Այդ բաժնի երկու սրահում ցուցադրված էին «Հայ նկարիչների միության»՝ Երևանում կազմակերպված ցուցահանդեսից կառավարության գնած մի քանի աշխատանքներ։

Որոշ ժամանակ անց նորաստեղծ թանգարանի գեղարվեստական բաժինը ստացավ Մոսկվայի նախկին Լազարյան ճեմարանի և Էջմիածնի Մատենադարանի գեղարվեստական հավաքածուները, որոնք ժամանակի ընթացքում հարստացան, սրահների թիվն ավելացավ, հայ կերպարվեստի հարուստ բաժին կից բացվեցին նաև ռուսական և արևմտաեվրոպական արվեստագետների ստեղծագործությունների բաժիններ։ 1935 թ. Պետական թանգարանի գեղարվեստական բաժինը դարձավ Հայկ. ՍՍՌ Կերպարվեստի պետական թանգարան, իսկ 1947 թ. վերանվանվեց Հայաստանի պետական պատկերասրահ։

Պատկերասրահի համալրմանն ու հարստացմանը մեծապես նպաստել են կառավարության կողմից տրամադրված դումարներով գնված գեղարվեստական աշխատանքները, Մոսկվայի և Լենինգրադի խոշորագույն թանգարանների, հատկապես Պետական Էրմիտաժի կողմից ռուսական և արևմտաեվրոպական արվեստի մի շարք արժեքավոր գործեր տրամադրելը Պատկերասրահին, ինչպես նաև Սովետական Միությունում և նրա սահմաններից դուրս բնակվող արվեստագետների և արվեստասերների նվիրատվությունները (Է. Շահին, Հ. Գյուրջյան, Գ. Զամբախչյան, Հ. Ճրնճյան և այլք)։

Համալրման խոշոր աշխատանքի շնորհիվ, ներկայումս Պատկերասրահի ֆոնդերում կենտրոնացված են 3984 գեղանկարչական, 6642 գրաֆիկական, 561 քանդակագործական և 2893 կիրառական արվեստի ստեղծագործություն։ Ֆոնդերի այս կարգի հարստությունը և, միաժամանակ, նրանց բազմազանությունը հնարավորություն է տվել Պատկերասրահում ստեղծելու հայկական, ռուսական և արևմտաեվրոպական արվեստների հարուստ բաժիններ։

Պատկերասրահի հայկական կերպարվեստի բաժինն ընդգրկում է ազգային կերպարվեստի զարգացման պատմության առավել բնորոշ շրջանները։ Այն սկսվում է ուրարտական հնագույն որմնանկարի (Արինբերդից, VII դ. մ. թ. ա.) և Գառնիի բաղնիքի սենյակներից մեկում պահպանված խճանկարի (III դ. վերջ մ. թ. ա.) դոկումենտալ ընդօրինակություններով։

Միջնադարյան շրջանի որմնանկարչությունը սկսվում է Պողոս-Պետրոս եկեղեցու նկարապարդման պահպանված բեկորներից (Երևան, VI դ.), որն իր մոտիվներով պարզ պատկերացում է տալիս հելլենիստական արվեստից նորին՝ քրիստոնեականին անցնելու մասին։ Վերջինիս հայկական օրինակներն են Արուճի (Աշտարակի շրջան, VII դար), Լմբատի (Արթիկի շրջան, VII դ.), Հաղբատի (Ալավերդու շրջան, X դ.), Տաթևի (Գորիսի շրջան, X դար), Ախթալայի (Ալավերդու շրջան, XI—XIII դդ.), բարձրարվեստ որմնանկարների դոկումենտալ ընդօրինակությունները, որոնք ոչ միայն պատմական խոշոր արժեք ունեն, այլև մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնադարյան հայ արվեստի բազմակողմանի ուսումնասիրության համար։

Ինչպես որմնանկարների, այնպես էլ Մատենադարանում պահպանվող ձեռագրերի մանրանկարներից կատարված ընդօրինակությունները հնարավորություն են ստեղծել այնպիսի աշխատությունների հանդես գալուն, ինչպիսիք են Լ. Դուրնովոյի «Հայկական մանրանկարչությունը», «Հայկական միջնադարյան նկարչության համառոտ պատմությունը», «Հայկական դաջածոն»։

Պատկերասրահի ֆոնդերում կարելի է ծանոթանալ Հովնաթանյան նշանավոր տոհմի՝ Նազարի, Հովնաթանի, Մկրտումի աշխատանքներին, որոնց արվեստը մի գեղեցիկ անցում էր միջնադարից դեպի նոր շրջանի հայ կերպարվեստը։ Այդ նոր շրջանին բնորոշը դիմանկարչության ժանրն էր, որի առաջին օրինակը թվագրվում է XVII դարով։ XVIII դարի անհայտ նկարիչների դիմանկարչական գործերը բնորոշ են իրենց չափազանց ինքնատիպ կոմպոզիցիոն և գեղանկարչական լուծմամբ («Կինը երեխայի հետ», «Կանացի դիմանկար»)։

Հայկական դիմանկարը զարգացման նոր աստիճանի է հասնում XIX դարի կեսերին՝ Հակոբ Հովնաթանյանի արվեստում։

Ավելի քան չորս տասնամյակ Թիֆլիսում ապրած Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործական հասուն կյանքի արդյունք են հանդիսանում Պատկերասրահում պահպանվող նրա մի շարք դիմանկարները, որոնք Հովնաթանյանի ժամանակ գործող դիմանկարիչների կտավներից նկատելիորեն տարբերվում են իրենց պրոֆեսիոնալիզմով, կատարողական բարձր ճաշակով, դույների դեկորատիվ հարաբերությունների նուրբ զգացողականությամբ։ Ձնայած նկարելու միփոքր հարթապատկերային ոճին, Հակոբ Հովնաթանյանը կարողացավ ստեղծել ժամանակա-

Ֆրանսիական արվեստի սրահը

կիցների հոգերանորեն խորապես արտահայտիչ դիմանկարներ։

XIX դարի երկրորդ կեսը հայ կերպարվեստի համար նշանակալից է որպես տարբեր ժանրերի զարգացման ժամանակաշրջան։ Պատկերասրահում է պահվում մեզ հայտնի հայկական առաջին կենցաղային նկարը՝ Ստ. Ներսիսյանի «Զրոսախնջույք Քուռ գետի ափին» աշխատանքը։ Այցելուները կարող են ծանոթանալ բնության վարպետ երգիչ Գեորգ Բաշինջաղյանի կտավներին։ Արարատն ու Արարատյան դաշտը, Սևանն ու Քուռ գետը, Դիլիջանն ու Ալազանի հովիտը՝ ահա նկարչի ստեղծագործության հիմնական մոտիվները, որոնք իրենց կատարողական բարձր արվեստով ուղի հարթեցին հետագա բնանկարիչների համար։

Ինչպես Գեորգ Բաշինջաղյանը, նույնպես և XIX դարի վերջի շատ բնանկարիչներ իրենց վրա կրում են աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու արվեստի կնիքը։ Այվազովսկու արվեստի ազդեցության տակ է ձևակերպվել հայ նկարիչներ Վ. Մախոխյանի, Է. Մահտեսյանի ստեղծագործական դեմքը։ Սթև վերջիններիս աշխատանքներից Պատկերասրահը հնարավորություն է ունեցել հավաքելու մի քանի աշխատանք միայն, ապա Հովհաննես Այվազովսկու սրահը հնարավորություն է ստեղծում ծանոթանալու ծովանկարչի արվեստն ամբողջացնող ավելի քան վաթսուն աշխատանքների հետ։

Պատկերասրահի հարուստ հավաքածուներից է Վարդգես Սուրենյանցի բաժինը։ Ժամանակին ցուցահանդեսում բարձր գնահատականների արժանացած նրա համարյա բոլոր աշխատանքներն այժմ ցուցադրված են անվանի արվեստագետի սրահում։ Այստեղ կարելի է ծանոթանալ Սուրենյանցի հայկական, պարսկական, իսպանական, բիբլիական թեմաներով կատարված կոմպոզիցիոն աշխատանքներին, բազմաթիվ գրքերի նկարազարդ էջերին, որոնք գեղագիտական բարձր ներգործությամբ հանդերձ, վկայում են արվեստագետի բազմակողմանի հետաքրքրությունների, նրա աշխարհայացքի, նրա փիլիսոփայական խորաթափանց մտքի մասին։

Հայկական ժանրային նկարչության զարգացումը ակնհայտորեն դրսևորված է Հարություն Շամշինյանի և Հմայակ Հակոբյանի կտավներում, նկարիչներ, որոնք ապրելով ու ստեղծագործելով Թիֆլիսում, վերարտադրեցին տեղի նիստուկացը, սովորությունները, դառնալով հին Թիֆլիսի յուրատիպ երգիչներ կերպարվեստում։ Սակայն եթե Հ. Շամշինյանն ու Հմ. Հակոբյանը երևույթը լրջախոհ բնդհանրացնողներ են, ապա Վանո Խոջաբեկյանն իր ինքնատիպ գրաֆիկական էջերում մատիտի մի քանի գծով միայն կարողանում է պատկերել կենցաղին բնորոշ զավեշտականն ու սրտանց ծիծաղում է։ Մինչոնոյյուցիոն հայ քանդակագործությունից մեզ հասած մի քանի գործերն անգամ լրիվ պատկերացում են տալիս Ա. Տեր-Մարությանի,

Մ. Միքայելյանի արվեստի, նրանց հետաքրքրությունների և նախասիրությունների մասին։

Պատկերասրահն իր հավաքագրական աշխատանքներում որոշակի դժվարության է հանդիպել սփյուռքահայ արվեստի հարցում։ Անցած քառասուն տարիների ընթացքում հնարավոր է եղել հավաքել սփյուռքահայ արվեստագետների գործերի չնչին մասը միայն. սակայն այդ սակավաթիվ նմուշներն անգամ պատմում են նրանց կյանք տվող արվեստագետների ստեղծագործական կարողությունների մասին։ Հայկական նատյուրմորտի զարգացման մեջ խոշոր ավանդ ունի Զ. Զաքարյանը, մի նկարիչ որն իր արտակարգ ընդունակությունների համար արվեստաբանների կողմից արժանացել է «Հայկական Շարդենն» անվան։ Կ. Ադամյանի ծովանկարներում հատկապես զգացվում է բնության մեջ լույսի հետ կապված հարցերը յուրատիպ վերարտադրելու ձգտումը։ Հ. Ալխազյանին գրավում են բնության ամայի անկյունները և հատկապես աշնանային տեսարանները՝ արևի ոսկե շողերով ջերմացած։ Պատկերասրահում կարելի է ծանոթանալ Ս. Խաչատրյանի, Ա. Շաբանյանի, Տ. Եսայանի, Ա. Ֆեթվաճյանի, Ս. Երկանյանի, Ե. Դեմիրճյանի, Գ. Մկրտչյանի, Հ. Տիրիդի և շատ ու շատ ուրիշ նկարիչների (տարբեր երկրների մոտ վաթսունհինգ արվեստագետների) ստեղծագործություններին, որոնք երբեմն պատահականորեն են ընկել Պատկերասրահ և լրիվ պատկերացում չեն տալիս տվյալ ստեղծագործողի արվեստի մասին։

Անհամեմատ հարուստ է Հ. Գյուրջյանի և Է. Շահինի գործերի հավաքածուն։ Հ. Գյուրջյանի բանդակագործական ավելի քան 500 աշխատանքը և Էդգար Շահինի օֆորտներն ու գրծանկարները համալրում են Պատկերասրահի հայկական բաժնի ոսկե ֆոնդը։

Այլ կերպ դասավորվեց Նախառևոլյուցիոն շրջանի հայ կերպարվեստի այն վարպետների ճակատագիրը, որոնց բախտ վիճակվեց մնալ հայրենիքում։ Դրանցից է Եղիշե Թադևոսյանը, որը բնանկարիչ է, դիմանկարիչ և թեմատիկ կոմպոզիցիոն պատկերի վարպետ։

Ստեփան Աղաջանյանի դիմանկարներին բնորոշ է պատկերվողի ներքնաշխարհի խոր ու բազմակողմանի բացահայտումը։

Ավելի քան վաթսուն տարեկան էր Փանոս Թերլեմեզյանը, երբ երկար ու տանջալից թափառումներից հետո վերադարձավ հայրենիք՝ թանգարանին նվիրաբերելով իր կտավները։ Պատկերասրահում հնարավոր է եղել հավաքել այդ երեք խոշոր արվեստագետների համարյա բոլոր ստեղծագործությունները։ Ե. Թադևոսյան, Փ. Թերլեմեզյան և Ստ. Աղաջանյան՝ այն արվեստագետներն են, որոնց ստեղծագործական կյանքի զգալի մասն անցավ մինչսովետական շրջանում, սակայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո նրանք կարողացան հայ արվեստի ռեալիստական տրադիցիաները փոխանցել նոր սերնդին։ Այդ սերնդի առաջին ներկայացուցիչներից մեկը Սեդրակ Առաքելյանն էր, որի գողտրիկ բնանկարներին բնորոշ է բնության լիրիկական տրամադրության վերարտադրումը։

Սովետահայ կերպարվեստի ավագ սերնդի ներկայացուցիչ Հակոբ Կոչոյանի գեղանկարչական ինքնատիպ ստեղծագործությունների հետ մեկտեղ Պատկերասրահի հարստությունն են կազմում հուզական մեծ ուժով ընդգծված նրա յարձրարվեստ գրաֆիկական էջերը։

Պատկերասրահի սովետահայ բաժինն ընդգրկում է մեր ժամանակի ականավոր գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի նշանակալից հավաքածուն, աշխատանքներ՝ որոնք իրենց հետ կենսուրախություն են բերում։

Պատկերասրահը այն հանգրվանն է, ուր իրենց վերջնական օրրանն են գտել սովետահայ կերպարվեստի ավագ սերնդի լավագույն ներկայացուցիչների՝ Գ. Գյուրջյանի, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի, Ա. Ուրարտուի, ինչպես նաև միջին և երիտասարդ սերնդի ստեղծագործողների լավագույն գործերը։

Հայ արվեստագետների ստեղծագործություններից բացի Պատկերասրահում կուտակվել են բազմաթիվ արժեքավոր փաստաթղթեր, նամակներ, բիբլիոգրաֆիկ նյութեր, որոնք լուսաբանում են այս կամ այն ստեղծագործողի կյանքի ու գործունեության հետ կապված էջերը։ Այդ նյութերի հիման վրա Պատկերասրահում ստեղծվել է հուշադրական-ձեռագրային բաժին՝ ավելի քան 15000 միավորով։

Հայ կերպարվեստի այսպիսի ամբողջական հավաքումը հնարավորություն է ստեղծել բազմակողմանիորեն ուսումնասիրելու հայ կերպարվեստի պատմությունը, նրա զարգացման, նրա առանձին օղակների հետ կապված տեսական և գիտա-հետազոտական բազմաթիվ հարցերը։

Սովետահայ կերպարվեստագիտության զարգացման հիմքը եղել է Պատկերասրահի հավաքածուն, որի հիման վրա էլ լույս են տեսել Ռ. Ռաշինջաղյանին, Վ. Սուրենյանցին, Ա. Տեր-Մարուքյանին, Ս. Աղաջանյանին, Փ. Թերլեմեզյանին, Ե. Թադևոսյանին, Հ. Կոչոյանին, Մ. Սարյանին և սովետահայ մյուս կերպարվեստագետներին նվիրված մենագրությունները, ինչպես նաև բազմաթիվ ալբոմներ, բացիկներ։



Վարդգես Սուրենյանցի ստեղծագործությունների սրահը

Հայաստանի պետական պատկերասրահի ռուսական արվեստի հավաքածուն ընդգրկում է XVII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերի հանրահայտ ռուս արվեստագետների բազմաթիվ աշխատանքներ։ Դրանց թվումն են Ի. Արգունովի, Վ. Տրոպինինի, Վ. Բորովիկովսկու, Դ. Լևիցկու, Ֆ. Գորդեևի, Ֆ. Շուրինի, Ի. Մարտոսի, Կ. Բրյուլլովի, Սիլվեստր Շչեդրինի, Կ. Մակովսկու գեղանկարչական և քանդակագործական աշխատանքները, իսկ XIX դարի երկրորդ կեսի էքսպոնատները՝ Վ. Պերովի, Ի. Կրամսկոյի, Ի. Ռեպինի, Ի. Շիշկինի, Վ. Սուրիկովի, Վ. Վասնեցովի, Վ. Վերեշչագինի, Ի. Լևիտանի, Վ. Պոլենովի լավագույն աշխատանքների շարքը կարող են դասվել։ Ռուսական բաժնի մարգարիտներից է Վ. Սերովի «Մ. Ակիմյանի դիմանկարը», գեղանկարչական մի գլուխգործոց, որը ոչ միայն Վ. Սերովի ստեղծագործության, այլև XX դարի ռուսական գեղանկարչության հրաշալիքներից մեկն է։ Այդ մեծ հարստություններ լրացնելու են գալիս Գոլովինի, Մ. Նեստերովի, Բենուայի, Յուոնի, Ս. Լեբեդևայի, Շագրի, Օստրոումովա-Լեբեդևայի, Անդրեևի, Ե. Լանսերեի, Պլաստովի, Ս. Գերասիմովի և ժամանակակից սովետական կերպարվեստի այլ վարպետների գործեր։

Արտասահմանյան արվեստը ցուցադրված է ըստ երկրների։ Իտալական արվեստը XIV—XVII դդ.՝ Յակորո Բասանո, Տինտորետտո, Գվարդի, Կանովա, Ֆլամանդացիներ՝ Ռուբենս, Իորդանս, Վան Դեյկ, Հոլանդացիներ՝ Գոյեն, Նետշեր, Կլաս. Ֆրանսիական արվեստ՝ XVII—XIX դդ.՝ Ֆրագոնար, Բուշե, Հյուբեր Ռոբեր, Լանկրե, Ֆալկոնե, Օրաս Վեռնե, Ռուսսո, Դիազ, Դուստավ Կուրբե, Ռուդեն։

Հաջորդ սրահներում ցուցադրված են Անդրիայի, Շվեյցարիայի, Ռումինիայի, Չինաստանի, Հնդկաստանի և մի շարք այլ երկրների արվեստագետների, ինչպես նաև Սերի, սաքսոնական ճենապակյա իրերի, գորելենների, կիրառական արվեստի, օֆորտների, գծանկարների, դրավյուրների նմուշներ։ Այդ օրիգինալ ստեղծագործությունների թվում կան այնպիսի արժեքներ, որոնք կարող են դարդարել աշխարհի ամենալավագույն թանգարանները։ Դրանց թվին են պատկանում Վ. Սերովի վերոհիշյալ Մ. Ակիմովայի դիմանկարը, Գուստավ Կուրբեի «Աղջկա դիմանկարը»—նկարչի վաղ շրջանի ռոմանտիկ շնչով կատարված աշխատանքներից մեկը, որը, միաժամանակ, Կուրբեի միակ դիմանկարչական գործն է ողջ Սովետական Միության մեջ։ Սովետական Միության ոչ մի թանգարան չունի ռումինական արվեստի այնպիսի հավաքածու, ինչպիսին է Հայաստանի պատկերասրահինը։ Այս հավաքածուում կարելի է ծանոթանալ Գրիգորեսկուի, Ա. Լուկիանի և Պալադիի կտավներին, նկարիչներ, որոնք ստեղծեցին մի ամբողջ ժողովրդի նոր շրջանի գեղանկարչական դպրոցը։

Անկասկած, պատկերասրահում այս կարգի հարստությունների առկայությունն առաջնահերթ անհրաժեշտություն է դարձրել նրանց պրոպագանդման հարցը, մի խնդիր, որն ունեցել է իրագործման բազմազան ձևեր։ Դրանցից առաջինը ցուցահանդեսներն են։ Տարիներ շարունակ պարբերաբար կազմակերպվել են անհատական, թեմատիկ, հանրապետական և այլ բնույթի ցուցահանդեսներ, որոնք հնարավորություն են տվել ժողովրդին հասցնելու այն հարստությունները, որոնք պահպանվում են Պատկերասրահում։ Այդ ցուցահանդեսներից հատկապես նշանակալից են Մարկեի, Ռեմբրանդտի, Լեոնարդո դա Վինչիի, Ռոքուել Քենտի, Ժան Սֆելի, Վ. Պոլենովի, Ս. Լանսերեի, Գ. Գաբաշվիլու, Մաքս Շվաբինսկու և բազմաթիվ այլ արվեստագետների ստեղծագործությունների ցուցադրումները։ Ամեն տարի պարբերաբար կազմակերպվել են հայ արվեստին նվիրված ցուցահանդեսներ՝ առանձին արվեստագետների, սովետահայ կերպարվեստագետների, ինչպես նաև սփյուռքահայ նկարիչների ստեղծագործությունների։ Թեմատիկ ցուցահանդեսներ են կազմակերպվել ռեսպուբլիկայի գործարանների ակումբներում, Լենինականում, Կիրովականում, Դիլիջանում, Իջևանում, Ապարանում, Արտաշատում, Ոսկեվազում, Ալավերդում, Ստեփանավանում, իսկ մի շարք ցուցահանդեսներ կազմակերպվել են Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Օդեսայում, Թբիլիսիում, Բաքվում, Քիշինյովում։

Պրոպագանդման մյուս ձևը զեկուցումներն են։ Պատկերասրահի աշխատակիցները այլևայլ թեմաներով զեկուցումներ են կարդացել գործարաններում, կոլտնտեսություններում, դպրոցներում։ Անտիկ աշխարհի, Վերածննդի, XVII դարի հոլանդական նկարիչների, պերեդվիժնիկների, հայ արվեստի զանազան փուլերի, ինչպես նաև անհատ արվեստագետների կյանքի ու գործունեության մասին բովանդակալից զեկուցումներ են կազմակերպվել Պատկերասրահի դահլիճներում։

Հատկապես նշանակալից է եղել Պատկերասրահի աշխատանքը դպրոցականների հետ։

Թեմատիկ էքսկուրսիաներից զատ, Հայաստանի պետական պատկերասրահը Երևանի Պերճ Պողշյանի անվան դպրոցում կազմակերպեց «Պատանի արվեստասերների խմբակ»։ Խմբակի անդամները, 1952 թ. սկսած կազմակերպել են հանդիպումներ հայ, վրացի և ադրբեջանցի անվանի արվեստագետների հետ, եղել են Մ. Սար-

Հակոբ Դյուրդյանի և Էդգար Շահինի արհեստանոցների սրահը

յանի, Ա. Սարգսյանի, երիտասարդ ստեղծագործողների արվեստանոցներում, մեկնել են Մոսկվա ու Լենինգրադ, ծանոթացել ռուսական ու Եվրոպական արվեստի խոշորագույն հուշարձաններին։

Պատկերասրահում տրադիցիա է դարձել այսպես կոչված «բաց դռների օրը», երբ արվեստասերները հնարավորություն են ունենում ծանոթանալու սովետահայ արվեստագետների հետ, զրուցելու նրանց ստեղծագործական հեռանկարների մասին։

Պատկերասրահի պրոպագանդիստական գործունեությանը զգալիորեն նպաստել է կատալոգների, առանձին աշխատանքների ռեպրոդուկցիաների, դրանց նվիրված փոքր բրոշյուրների հրատարակումը։

Պատկերասրահի գործունեության մյուս կարևոր կողմը էքսպոնատների պահպանման գործն է։ Շենքի որոշ անհարմարությունը, անկասկած, խոչընդոտ է հանդիսանում ստեղծագործությունների լայն ցուցադրմանն ու նրանց պահպանմանը (թանգարանային տեսակետից Երևանի կլիմայական պայմանները հատկապես աննպաստ են), սակայն Պատկերասրահում արվում է ամեն ինչ արվեստի գործերի կյանքը երկարաձգելու նպատակով։ Պահպանման բաժնում կատարվող հմուտ հաշվառումը, ստեղծագործությունների նկարագրումը, դասավորումն ու պահպանումը երկարաձգում են նրանց կյանքը։ Այդ գործին մեծապես նպաստում է Պատկերասրահի restավրացիոն արվեստանոցի աշխատանքը, որի շնորհիվ բազմաթիվ ստեղծագործություններ ստացել են նոր հրնչողականություն։

Պատկերասրահում պահպանվող ամեն մի իրի «կենսագրությանը» կարելի է ծանոթանալ այն քարտերի միջոցով, որոնք ընդգրկում են տվյալ աշխատանքի հետ կապված բոլոր ցուցահանդեսները, բիբլիոգրաֆիկ նյութերը, նրա նկարագրությունը, վիճակը և ողջ կյանքի պատմությունը։

Ընդամենը քառասուն տարեկան է Հայաստանի պետական պատկերասրահը։ Սակայն այդ կարճ ժամանակամիջոցն անդամ բավական է եղել, որպեսզի հավաքած ստեղծագործությունների քանակով, նրանց որակով, իր բազմակողմանի գիտա-հետազոտական ու պրոպագանդիստական գործունեությամբ նա կարողանա դասվել Միության խոշորագույն թանգարանների շարքը և դառնալ ռեսպուբլիկայի մշակույթի կարևոր ու լավագույն օջախներից մեկը։

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Strarpie Der Nersessian. *The Armenian Chronicle of the Constable Smpad or of the „Royal Historian"* (Սմբատ Դուռնդրստարլի կամ «արքունի պատմիչ» հայոց տարեգիրքը), Dumbarton Oaks Papers, XII. 1959, էջ 141—168)։ Գրված է Սմբատ Գունդրստարլի երկի նոր հրատարակության կապակցությամբ (Ս. Ադելյան, Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956)։ Բաղդատությունը ցույց է տալիս, որ հրատարակված է այն գրչագիրը, որը հատվածաբար լույս է ընծայել ժամանակին Ղ. Ալիշանը (Հայապատում, Ի, էջ 412, 436—441)։ Հոդվածագիրը դալիս է այն եզրակացության, որ «արքունի տարեգրքի» հեղինակը Սմբատն է, և նրա երկը ամբողջությամբ պահպանվել Վենետիկի գրչագրում, մինչդեռ Մոսկվայում և ապա Փարիզում հրապարակված էջմիածնի ձեռագրերը պահպանել են համառոտված խմբագրությունը որոշ հավելումներով։ Սմբատի տարեգրությունը շարադրված է Մատթեոս Ուռհայեցու և նրա շարունակողի հիման վրա (951—1162 թթ.), ապա՝ ինքնուրույն է։ Շարադրությունը կանգ է առնում 1272 թ. դեպքերի վրա, որից հետո մեկ թերթ ընկած է։ Իր գործը Սմբատը հասցրել է մինչև 1274 կամ ամենաուշը՝ 1275 թ., որովհետև 1276 թ. վախճանվել է։

Vahan M. Kurkjian, *A History of Armenia* (Հայոց պատմություն), Armenian Benevolent Union of America, New York, 1958, p. (VIII) 526, նկարագրում է հայոց պատմության ակնարկները՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Հատուկ գլուխ է նվիրված ֆեոդալական սիստեմին Հայաստանում (էջ 311—328), որոշ տեղ է հատկացված նաև հայոց մշակույթի տարբեր ընագավառներին։ 494—500 էջերում տրվում է մատենագիտական ցանկ, որն ընդգրկում է նաև սովետական գիտնականների աշխատությունները (աշխատությունների վերնագրերը տրված են